Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քաջարանի թիվ 5 **միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկա** (20 **դասաժամ**), **հայոց լեզու** (10 **դասաժամ**), **տեխնոլոգիա** (8 **դասաժամ**), **կերպարվեստ** (7 **դասաժամ**), **երաժշտություն** (7 **դասաժամ**), **ինֆորմատիկա** (8 **դասաժամ**), **առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 2-ը ներառյալ, ամենօր՝ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 **թ**. սեպտեմբերի 6-**ին՝ ժամը** 13:00-**ին «Քաջարանի թիվ** 5 **միջնակարգ դպրոցում»**, հասցե՝ՀՀ Սյունիքի մարզ ք. Քաջարան, գ. Բաբիկավան 3/1: Տեղեկությունների համար զանգահարել 0285 6-12-87, 077582854 հեռախոսահամարով: